

ունքը ունէ՞ք, որովհետեւ որքան գրեւոր նիւթն առատ է այստեղ, նոյնքան աւելի եւս գորդ-ներն է աշխատողներն սով է: Կրկնու համար ժամանակ եւ այլ ամեն յարմարութիւններ ունեցողները անտարբեր են բոլորովին, իսկ որոնք բոլոր սրտով յօժար են աշխատելու անթիւ արգելքներով չըրապատված են և զուրկ հարկաւոր միջոցներից: Ինչո՞ր ինձ է վերաբերվում, ես մինչև անգամ մեծ պարտաւորութիւն եմ զգում միշտ տեղեկութիւններ հասցնել ձեզ գոնէ չաբարձր մի նամակ գրելով, բայց ցաւն այս է որ դժուարութիւններ կան, որոնց դեռ կարողութիւն չունեմ յաղթելու: Ես սիրում եմ իրողութիւնների վրա միայն խօսել և զգուշանալ սըտուկներէ, բայց իրողութիւնները անաշուապէս լոյս հանելը շատերը կրանց պատուին դէմ համարելով չեն համբերում ու ջանք են անում որ և ինչ կերպով հալածանք յարուցանել զորովի դէմ և վտանգի ենթարկել նորան: Մեր քաղաքացիք, ումանց չնորհով, վաղուց բռնկւած են իրանց գործերի մասին հրապարակական փարթամ գովեստներ միայն լսելու, այս պատճառով բաւական բազմաթիւ են այս տեղ «նրբագրացները ու դիւրագրողները»: և վայ նրան ով սրանց անհաճոյ մի ճշմարտութիւն կը հրաւորակէ: Անցեալ նամակներս ումանց շատ անախորժ թուեցան և նրանցից մինքն սաստիկ զայրացած մէկի վերաբերութեամբ (կարծելով թէ նա է գրում) ակնարկութիւններ էր անում և յայտնապէս սպառնում, թէ ինքն կը պատժէ նրան ինքնագլուխ և թ ու թ և ո ո թ (այսինքն սրիկաների ձեռքով) վրէժնդիր կը լինի. ահա թէ ինչի այսքան ժամանակ ոչինչ չեմ գրում: Իրաւ, երկրորդութիւնը առաքելութիւն չէ, բայց արկածանդիւր լինելն եւ մի բան չէ: Ուրեմն ներքեցէ, եթէ ասեմ որ սա վերջին նամակն է. հաւատացէ՛ք, վատ տպաւորութիւն է դալիսմարգուս վրա, երբ բազմաթիւ սագեր միաբերան աղաղակ են բարձրացնում:

Մահմադականները, ինչպէս յայտնի է, շատ կը սիրեն իրանց հաճոյքը բռնութեամբ և զէնքով կատարել, ինքնագլխով նրանց մէջ սովորական երեւոյթ է: Մինչև անգամ ամուսնութեան մէջ, ուր պէտք է տեղի ունենան սէր, համաձայնութիւն և խաղաղութիւն, մահմադական սովորութիւնը զէնք և բռնութիւն է դործածում: Հարանիքի ժամանակ փեսայի խումբը զինուորված ասես թէ արշաւանք է անում հարանացուի տան վրա նրան փախցնելու կամ յափշտակելու դիտաւորութեամբ, որի դէմ միւս խումբը, ի հարկէ, զորոյ և պատաստ կանդնած է: միմեանց մտահնայլոց յետոյ սկսում են սակարկութիւն անել և հարսի կողմը փեսայականներին կաշառքի կամ փրկանքի նման մի բան տալով՝ ապա թէ լռեցնում է: Այս ծիսականատարութեան ժամանակ յաճախ պատահում են եղբրական դէպքեր, որպիսիներէն մէկը անցեալ 1877 թիւ դեկտեմբերի 11-ին աչքով տեսանք այստեղ: Փրկանքի մասին խումբերը չը համաձայնելով սկսում են կռւել գիշերվա մօտ 10 ժամին և մի «թեթիւ գիւնապարտութիւն» անել, որից վերաբերողներ և մեռնողներ եւ լինում են: վրա է հասնում պոլիցիան և պահանջում է՝ նրանցից ցրվել, այլ նրանք չեն կատարում պահանջը: Վերջապէս տեղալին զօրախումբը հասնում է օգնութեան: Խաղաղեցնում են և նախընթաց ընտելութիւնը սկսում, որով 18 հոգի յանցաւոր են համարվում և ենթարկվում զինուորական դատաստանի, որովհետեւ այն ժամանակ Բագուի նահանգը պատերազմական դրութեան մէջ էր: Մեղադրվածներից ոմանք բանտումն էին, իսկ ոմանք ազատ:

Այստեղ հիւանդի աշնանային եղանակ է շատ բուռնակում, երկինքը գիշեր ցերեկ պարզ, օդը զով ու արևոք. հիւսիսային քամին անգամ, որ սեպտեմբերի վերջերում անձրևներ, ցեխ և ցուրտ բերեց, այժմ բոլորովին լուռ է և հանգաբար: Վայելաւոր ժողովուրդը, որը մինչև այսօր կիրակի, հինգշաբթի և տօն օրերին Միքայէլեան այգիումն էր մեծ բազմութեամբ զբօսնում և երաժշտութեամբ զուարճանում, այժմ անանից սկսած խմբվում է և ձեռում կօլբրապիւնի հրապարակի վրա, որի մէջ տեղը կանդնած են կօմարովսու. ցիւրկը և տիկ. Ձէզէլ-մէյերի տեսարանացոյց պատկերները, որոնք անցեալ ուսումնական պատերազմի զանազան գործողութիւններն են ներկայացնում: Այսօրվանից սկսած ցիւրկի դռները բաց են լինելու ժողովրդի առաջին, և քանի տասն հազարներ են դուրս բերելու, մանաւանդ արուեստաւոր և հասարակ դասի զբոսանքներից:

Անցնենք դէպի մի կարեւորագոյն հարց, որ են

Բագուի փողոցները: Այսուհետեւ ահա կը սկսեմ օրերով և շաբաթներով շարունակ փնել հիւսիսային քամին, անձրևներ կը գան և մեր փողոցները անանցնելի կը դառնան սարսափելի ցեխի պատճառով, որովհետեւ անձրևաշուրը չը կարողանալով ամուսնանից նստելով ուղղված հողի մէջ ներս ծծվել մնում է երեսին, հաւաքվում և ահագին ճահճներ և փոսեր շինում: Մի քանի փողոցներում տիգմն այնքան խոր է լինում, որ շատ անգամ կառքեր և սայլեր են մէջը ընկնում, որոնց հանելու համար անտանելի դժուարութիւններ են կրում տէրերը: Այդ տիգմն երկար կենալով սկսում է զզվելի դարձնողութիւն տարածել դէպի չընկալաքը, մանաւանդ երբ սայլերը նորանով անցնելիս խառնվում են: Կառքով մանեկողների համար դեռ ոչինչ, իսկ բաղրի խորթ որդիքը, որոնց վրէժակված է միշտ ոտքով մանգալ, միանգամայն յուսահատ դրութեան մէջ են լինում: Շատ անգամ փողոցի միւս կողմը անցնելու համար, որ ընդամենն 3-4 սառնէ տեղ է, մարդիկ ստիպված են մի քանի 100 սառնէ ճանապարհ կտրել և անցը գտնել ուղղած տեղը գնալու: և ինչ անցք է այն—ցեխի մէջ, միմեանցից հեռու, մի քանի ոտնատեղեր, որ պէտք է քարից քար թռչնոտելով անցնել, և վայ նրան, ով ճարպիկ չէ չափած և արգը ոտիւն անելու, այնպիսի անցորդը ընկնում է ցեխի մէջ և խրվում մինչև ծնկները: Ահա արանք են հարուստ Բագուի փողոցները: Կը տեսնես համարեն թէ միշտ, այս փառաւոր կամուրջների երկու ծայրումը հաւաքված բազմաթիւ մարդիկ, որոնք կանգնած հերթի են սպասում, որ ոտիւն անելով անցնեն և շտապեն իրանց գործերին: Քաղաքային վարչութիւնը, ինչպէս երևում է, կամենում է հոգալ այդ մասին. նա նշանակել է 5000 ռուբլ և այժմ մի քանի փողոցներ սկսել են շինել իւր թէ. բայց այսպիսի անշնան դուստր հողեր թէ կարողանայ որ և ինչ օգուտ բերել ներկայ ահագին կարիքին. մանաւանդ նայելով թէ ինչպէս են շինում կարելի է համարձակ անել, որ փողերը զուր են ծախվում, որովհետեւ այնպիսի ցեխի առաջն առնել անհնարին է: Յանապիսի էր, որ մեր առաջած ձեռքն յուսման այս հարցը մեծ լրջմտութեամբ քննէր և աւելի արմատական հնարներ գործադրէր սրան լուծելու քան թէ չնչին և րոպէական միջոցների դիմէր:

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

16 հոկտեմբերի

Անն երկու շաբաթ է, որ Գանձակ քաղաքը բազմաթիւ անձրևներից ազատված արեգակի տեսութեան արժանանում է: Այգետէրերը խաղողի անձրևից փշանայու մասին յուսահատված էին: Նորա գիւնը, որ օտարականից բաւականին իջել էր այժմ կրկին բարձրացաւ: Փողոցների ցեխերի հետքը դեռ եւ մնում է: Դուք չը կարծէք թէ ասածս հասարակ ցեխ է, ոչ, իմ խօսքս հոտած ցեխի վրա է: Սա այնպիսի ցեխ է որ մօտով անցնողին այնպէս է դարձահոտ բուրում, որ քիչ է մնում ուշաթափեցնել, մանաւանդ ինձ նման անսովոր օտարականին: Վաղուց լսած էինք, որ մտադրութիւն կայ առաջի փողոցը խճայատակելու, լսածներին իրադրածմանը սպասում էինք, անցեալ օրը մեծ փողոցից դալով անցնում էի դէպի Քիւսաքանդ թաղը, ճանապարհին եւ երեսկայութեամբ զբաղված լինելով՝ գնում էի առանց ոտքի տակը նայելու. յանկարծ ինձ տեսալ գետնի վրա ընկած, կանգնեցի և ինչ տեսայ, ամբողջ փողոցի մէջը ածած մեծ մեծ քարեր և աւաղ (քարերի մէջ կային մօտ 14 ֆունտի ծեծութեամբ քարեր) այնպէս որ կառքերը և սայլերը անգամ մեծ դժուարութեամբ են անցնում, մտածելով չը լինի թէ սպասելի խճայատակը սա է: Գործին ծանօթ անձն չը պատահելով, ինձ համար դա մոլոր մնաց. արեւօք եթէ ես օրը ցերեկին ընկայ, ինչ պէտք է լինի խնդ. քաղաքացիների դրութիւնը, որոնք գիշերով փողոցից վերադառնում են տուն, Առտուած հեռու տանէ եթէ լապտերներն էլ աղօտ լոյս տալիս լինեն:

Քաղաքը համեմատելով իւր նախկին դրութեան հետ կարելի է ասել, որ փոքր ինչ գեղեցկացել է: Առաջին փողոցի տեղեկութեան պատճառը զվարճարարական տեղիս յաջորդ վարդապետի բնակարանն է. նա եւ շուտով կը քանդվի. ինչպէս լսեցինք արդէն մարմաւոր իշխանութեան համաձայնութեամբ եկեղեցին իր վնասների փոխարէն ստանալու է կրկնաչափ

հող և 1500 ռուբլ. սպասում ենք անհամբերութեամբ օր առաջ քանդված տեսնել այդ շինութիւնը:

Յանկալի է իմանալ ինչ է մտածում արեւօք մեր դպրոցների թիւն. վերապահուցը. մինչև երբ պէտք է Գանձակի և իւր վիճակի դպրոցները այսպէս խառն դրութեան մէջ մնան: Տեղին հասարակութիւնը ըստ էության սպասում է նրա գալուտեանը, *) ըստ որում, ինչպէս «Մշակ» ընթերցողներին յայտնի է, դպրոցների այս տարվայ նոր շտապի մէջ հոգաբարձութիւնը մի քանի փոփոխութիւն մտցրեց. Թեմակալ առաջնորդը հրամայել է ոչինչ փոփոխութիւն չանել և թողնել նոյնութեամբ մինչև թիւն. վերապահը զալը, որ լինելու է ամենաուշը ամիս 5-ին. Պ. Լպիսկոպոսեանց ժամանակ էր տուել հոգաբարձութեանը մինչև ամիս 10-ն, լրացած ժամանակը նա իւր յայտարարութեան համաձայն թողեց իր ուսուցչական պաշտօնը և չէ մշտնում դասատուն: Հոգաբարձութիւնը թիւն. առաջնորդի հրամանի համաձայն չէ խառնվում դպրոցի ուսուցչական մասի մէջ, թիւն. վերապահուցն չէ չէ գալիս իւր խոստման հակառակ: Սա դեռ սեպտեմբեր ամսին ուղարկել է երկու ուսուցիչ պ. Ա. Ա. և պ. Վ. Ե. Փիփ և Բանանց գիւղերի ծիսական դպրոցների համար, այդ պարտններ փոխանակ գնալու և իրանց յանձնած պաշտօնը շարունակելու, դեռ եւ այստեղ պարապ փողոցները չափում են. սորա պատճառը մեզ համար դեռ մութն է:

Անցեալ օրը եկեղեցու դռնովն անցնելիս յանկարծ ականջիս դիպաւ անախորժ հարա—հրոց, կանգ առի տեղս, որտեղ և կանգնած էին քաղաքացիներից մի քանիսը. նայելով դռնից ինչ տեսնեմ. հոգեւոր ուսուցիչների առաջ ինչտեղ և աշակերտներն են ժողովուած գաստաներում, նորա վերակացուն և վայելագործեան ուսուցիչը մէկգմկելու վրա խորտալով, դուստրով և սաները դետնին խփելով կուռում էին, պատճառը ցանկալի էր մեզ իմանալ. հասարակութիւնը լաւ աչքով չէ նայում այս պատահմունքի վրա, տեսնելու ուսուցիչական վարչութիւնը ինչ կասէ. Միայն չնորհալուութիւն պարտններին, որ իրանց կուրը կրօնավարութեանց վայելելութիւն չը փոխեցին:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են, «Այստեղի հասարակական գործերում մեծ անտարբերութիւն և անտեղութիւն է թագաւորում: Գաղութները դեռ տեսուչ չունեն, կամենում են, որ երկրից իրանց համար ընտիր և պատուական տեսուչ ցած գայ ձրի կամ էժան գնով, փող կամ եկամուտի հիմնաւոր ոչ մի աղբիւր չը կայ: Այստեղացիների խօսածները դատարի խօսքեր են եղել: Նխական ուսուցիչարանների հոգաբարձութեան և Վարդապետական ընկերութեան» վարչութեան անդամների մէջ ատելութիւն է տիրապետում:

Մեզ հաղորդում են ԲԱԳՈՒԻՑ, որ այնտեղ թաղային կանոնադրութիւնը մշտական հայ ներկայացուցիչներ տալու համար խումբը մեծ դժուարութիւններով պէտք է դաշնի գտնէ: Նամակագիրը խորհուրդ է տալիս ամբողջական ընկերութեանը ծախել հինգ կամ վեց հազար ռուբլ և թաղային կանոնադրութեանը օգուտներ կը ստանայ այդպիսի գործից:

Լսում ենք, որ ԹԻՖԼԻՍԻ Ներսիսեան դպրոցի տեսչի օգնական նշանակվել է պ. Ա. Նահապետեան, որի այդ պաշտօնի համար անշարժար լինելու մասին մեզ խոստանում են գրել մի ուրիշ անգամ: Տեսչի օգնական մի տիտղոս է միայն, մի ուրիշ տեսուչ չը կայ, որի պաշտօնականատարութեանը օգնել պարտը: Այդ տիտղոսը ընտրել է ինքն պ. Ա. Նահապետեանը մի քանի պատճառներով, որոնց մեղ խոստանում են մեկնել: Ասում են (շատ բան են ասում) որ պ. Ա. Նահապետեանը աստիկ զբղւում էր որ Ս. Մանդինեանին հրաժարեցնեն տեսչի պաշտօնից: Շատերը կարող են կարծել, որ պ. Նահապետեանը այդպէս վարվել է յիշեալ պաշտօնը իր ձեռքն առնելու համար, Դրանց կարծիքը ոչ ոք չէ կարող բուռնաբերել, իսկ մենք չէ՞ք ոք մնանք:

*) Թեմական տեսուչը հոկտեմբերի 16-ին ուղևորվեցաւ Գանձակ:

«КАВКАЗЪ» լրագիրը հաղորդում է, որ Նորին Բարձրութեան կողմանեւ դորքերի Գլխաւոր Հրամանատարի բարեխօսութեամբ Բարձրագոյն հրամայված է՝ ծախվելու համար որոշած արքունական ձիերը, որոնք, դորքերի մասերը խաղող դրութեան մէջ դնվելու պատճառով կովկասեան դիւտարական չըլանում, աւելորդ են մնացել, ձրի տալ նրանց, որոնք ամենից աւելի փոխադրող միջոցների կարօտութիւն ունեն, միայն այն պայմանով, որ նախապէս ժողովին լաւ ձիաներ կովկասեան դորքի ձիերի կազմակերպութիւնը նորոգելու և լրացնելու բնածախի հաշուով: Աւելորդ և ազգաբնակչութեան ընծայելու որոշված ձիաների թիւը մօտաւորապէս 14,951 է. բայց այս բոլոր ձիաները չէ կարելի բաժանել ազգաբնակչութեանը, որովհետեւ մինչև Բարձրագոյն հրամանի հրատարակումը դորքերի մի քանի մասերը արդէն սկսեցին հրապարակական աճուրդով ծախել ձիաները և ընդհատեցին այդ բանը միայն երբ քաղաքական վարչութիւնից ընդունողները եկան. իսկ դորքերի այն մասերը, որոնք իրանց ձիաների աւելորդը չը յանձնեցին հոկտեմբերի 1-ին ընդունողներ չը գալու պատճառով, կամ որոնք իրանց զվարճար բանակները գալով ձիաներ չը յանձնեցին—սկսեցին ձիաներ ծախել, և այդպէսով, ձիաների իսկական թիւը, որ կարող էր բաժանվել ազգաբնակչութեանը, մի փոքր պակաս կը լինի:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐԻՔԻԱ

«Голосъ» լրագրի թղթակիցը գրում է հետևեալը Կ. Պօլսից:

Վերջին ժամանակները Կ. Պօլսը դարձեալ պատերազմական տեսք ստացաւ: Գիշերները Պերայի փողոցներով անցնում են առեղջ գունդեր, ուղևորվելով Տօլստոյնէ նաւերի վրա նստելու համար: Պաշարեղէնների սայլերը և թնդանօթները նրանց հետեւում են: Այդ դրքերը, որոնք մեծ մասամբ Բաթումից են եկած, զրահակի մեծ նուստրով ուղևորվում են Սալոնիկի, իսկ այնտեղից մի քանիսի խօսքերով Սկուտարի (Ալբանիայում), միւսների՝ Կոստօօօ: Այստեղ խօսում են, որ Օսման-փաշա Բոսնիայի սահմանների վրա գտնվող դորքերի հրամանատար է նշանակվելու:

Վ. յուպիսի պատրաստութիւնները ապացուցանում են, որ Բ. Իրան քաղաքականութիւնը նոր ուղղութիւն է ստացել, և որ թիւրքաց կառավարութիւնը վճռել է անպատճառ ընդդիմանալ կօնգրէսի կարգադրութիւններին, եթէ այդպէս վարվելով նա մինչև անգամ կորցնի Թիւրքիա: Իմ հաւաքած տեղեկութիւնները հաստատում են այդ ենթադրութիւնը:

Միայն հոկտեմբերի 6-ին Կարաթէօզօրի-փաշան կարդացել է կոմս Անդրաշէին Բ. Իրան երկու շրջաբերականները: Նրանցից առաջին յայտնում է Վիէնայի կտրինտին, որ օսմանեան կառավարութիւնը մտալի է դադարեցնել բանակցութիւնները Աւստրիայի հետ դաշնադրութիւն կապելու մասին, իսկ երկրորդը մեղադրում է աւստրիական զօրքերին զանազան չարագործութիւնների մէջ, որ նրանք կատարել են Բոսնիայում և Հերցեգովինայում:

Վիպլոմատիական այդ յայտնութիւնների պատմութիւնը բաւական հետաքրքիր է: Նոքս մտածված են պալատում և ընդլած սուլթանի ներկայութեամբ: Սալֆեո-փաշա նրանց անտեղի և վտանգաւոր համարելով երկար ընդդիմանում էր և չէր համաձայնում այդպիսի ընթացք իր պատասխանատուութեան վրա առնել և մինչև այն աստիճան հաւատացած էր նրանց ընթացք տալու անկարելիութեան մէջ, որ մինչև վերջին օրերը պատասխանում էր դեսպաններին, թէ այդ մասին տարածված լուրերը բոլորովին անհիմն են: Այդպիսով Թիւրքաց մեծ վեղըրը կարողացաւ ամենքին խաբել: Այդ դժուարութիւնը ուղարկելուց եր-

կու օր յետոյ, Բ. Դուռը աւստրիական դեսպանատանը պատասխանեց, որ այդպիսի միջոցառումներ անգամ չը կայ: Այստեղ սովորութիւն կայ շրջաբերականներ թողարկելու: Կայ շրջաբերականներ թողարկելու օրը, երբ նրանք Ներսիսին օգնականին կամ միւս օրը: Դիւանատանը այդ սովորութիւնն ունակող անձը և սուտ հաւաստիքները սատարի անբաւականութիւն ծագեցրին այստեղի դեսպանատանը մէջ: Մտնաւանդ շատ գանգատուած էր աւստրիական դեսպանին կողմէն, որը աւելի հետաքրքրուած էր և որը Սովետ-փաշայի խաղաղութիւնը բարձր: Եթէ դեսպաններին կարողացան խաբելու և զինուորական զորանիւստի հետ թիւրքերից և ճշմարիտ գաղափարաւոր հոգեւորականները և ճշմարտութեան ծածկելը երբեք մինչև այդ աստիճան չէ հասել: Այստեղ մի ժամանակ խօսուած էին, որ Սովետ-փաշայի ընդդիմութիւնը յիշեալ շրջաբերականներին նրա հրաժարական տալու պատճառ կը դառնայ: Եւ այս հանգամանքը անհրաժեշտ մի բարձրաստիճան թիւրքեր, որ ինչ պատասխանեց. «Դուք սխալվում եք, միւս կերպերի հետ համեմատելով, թիւրքերը ամեն բան ընդհանրապէս է կատարվում: Սովետ-փաշա ընդդէմ էր իր չը հաւանած շրջաբերականներին, այդ պատճառով նա աւելի ոյժ ստացաւ»:

Աւստրիայի պատասխանը յիշեալ շրջաբերականներին արդէն ստացվեցաւ: Վիեննայի կառավարութիւնը ի նկատի է առնում բանակցութիւնների դադարեցնելը դաշնագրութեան մասին և խառնութեամբ հերքում է աւստրիական զորքերի անգլիաները Բոսնիայում և Հերցեգովինայում, ընդդիմադրելով նրանց ապստամբների սպանութիւնները և անգլիաները վերաբերված աւստրիացի զինուորների վերաբերութեամբ: Իսկապէս Բ. Դուռն մեղադրանքները ոչինչ ապագործիւն չեն կարող ունենալ Ներսիսի պայուսման, որովհետեւ թիւրքերի սովորութիւնն է ամեն անգամ երբ նա յայտնվում է, մեղադրել թշնամիներին անգլիաների մէջ:

Թիւրքերի միայն այն ժամանակ պատերազմ կը յայտնէ Աւստրիային, երբ այս վերջին զորքերը կը փորձեն գրաւել Նովի-Բազար և Միտրովիցա: Կոստանթնուպոլիսը թիւրքաց զորքերի կենտրոնացնելու նպատակն է մի կողմից երկուցը մէջ պահել Վալաքիան ընկերութիւնը, միւս կողմից ընդդիմանալ աւստրիացիներին, եթէ նրանք յանդգնեն Վալաքիա գրաւել:

Այստեղ դարձեցին խօսել Վալաքիան ընկերութեան մասին: Այս լուրերը մեկնում են նրանով որ իբր թէ թիւրքաց կառավարութիւնը համաձայնել է ընկերութեան հետ ընդդիմանալ թշնամուն թէ Հին-Սերբիայում, թէ Վալաքիայում և թէ Բուլղարիայում: Այն պատրաստութիւնները, որ կառավարութիւնը տեսնում է Բոզոպլան սարերի մէջ հաստատում են այս կարծիքը: Մէկ բան կարելի է հաստատ ասել որ Բերլինի դաշնագիրը կատարելու համար, ինչ որ անեն Բոսնիայում, Էպիրոսում, Վալաքիայում և Արևելեան Բուլղարիայում թիւրքաց կառավարութիւնը դրանցից ոչինչ չեն ընդունել: Նա այդպէս վճռել է, նա կը բողոքէ և կը պատերազմէ մինչև վերջին շունչը: Հետաքրքիր է իմանալ ինչ կասէ այն ժամանակ Անգլիան, որի նաւատորմը կանգնած է Պանդերման ծոցում և ազգայնաբանութիւնը: Պոլսի վրա է նայում:

ՂՕՁԱՆԻՍԱԴԻ ԱՊՍԱՍԲՈՒԹԻՆ

Սիւնի սեպտ. 6 և Ատանայէն սեպտեմբեր 7 թուով Բ. Դուռն եկած հեռագիրը կը ծանուցանեն թէ Օսմանեան զորքերը Խոզանի

ապստամբաց յարկերով, անոնց ձեռքը դրած նուաճ տեղերուն մեծ մասը, Հաճն, Պիլան, Ենյոյ, Ֆէքէ և ուրիշ կարեւոր գիւղերն առեր են: Ուստի և այս տեղեաց Գայմազաճներն ու Միտրոններն, որք ապստամբակետ Խոզան օղլու Ահմէտ փաշայի յարձակման ատեն օմնեք Ատանայ և ունեք Կեսարիա փախեր էին, սկսեցին նորոգել տեղերնին դառնալու պատրաստուել:

Ահմէտ փաշայի հետ սպորաբարձաբ Խոզան երթալով այն կողմի ժողովուրդներն ապստամբութեան գրգռող Վէրնետար Մէհմէտ էֆէնդին ալ Հաճնի ժողովուրդը կողմէն բռնուելով բանտարկուել է:

Սիւնի և Ատանայի մէջ հեռագրական հաղորդակցութիւնը դեռ խզուած են: Օսմ. զորքերը Չաթմաշը գրաւելուն վրայ Ահմէտ փաշա իր բնիկ երկրին եղած Պիլանքէյի և Ֆէքէի կողմերը փախած էր, ուրիշ ալ յետոյ ելնելով Խոզան լեռան արևելեան կողմի գիւղերուն մէջ ապաստանել է, բայց ուր տեղ գտնուելը ճշդէն յայտնի չէ:

Այս կողմերուն Օսմանեան զորաց ձեռքն անցնելուն վրայ, Սիւնի և շրջակայից թուրք բնակիչներն ու երեւելիներն, ինչպէս նաև քրիստոնեայ եկեղեցականաց հետ ժողովուրդը ալ հետզհետէ սկսեցին տեղերնին դառնալ:

Իզգէթ փաշան Սիւնի և շրջակայից ապստամբութեան համար՝ բաւական զօրօք Լիվա, Մազհար, Սիւն թողով, ինչն սկսեցին գեպի լեռան ներսերը քաշել Ահմէտ փաշան բռնելու և ապստամբութեան վերջին հարուածը տալու համար:

Ահմէտ փաշային մարդիկը Տուրոս լեռան Ատանայի կողմը գտնուող տեղեաց, ինչպէս նաև յունական գիւղերուն բնակիչներն ոտք հանելու աշխատեցին: Բայց քրիստոնեայ տեղերնուն անգամ չը շարժելով, հնազանդութեան մէջ մնացին են:

Ահմէտ փաշան 2000 զինուոր չափ վառօղ շինել տուել և այն կողմի այս տարուան հունիսից օգոստոսի տուրքերն ալ հաւաքել է:

Ատանայէն սեպտ. 9 թուով եկած հեռագիր մ' ալ կը ծանուցանէ թէ Խոզան—Տաղի ամեն կողմը խտրաշուրթիւնը վերահաստատուել է, և թէ ապստամբութեան գլուխ Ահմէտ փաշային ջով իւր քանի մ' ազգականներէն զատ մարդ չը մնալով, ուր փախած ըլլալը յայտնի չէ:

(Մատիւ)

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻԱՅԻՑ

Վան, 18 սեպտեմբերի

Վերջին տարիներս յորմէ հետէ թուրքահայատակ հայոց նիւթական և բարդական կեանքն աւելի շատ թշուառացաւ: Թուրքիոյ անկախ կառավարութեան երեսէն, մեր ուսումնական եղբարց աւելի առիթ եղաւ գիտել իրենց ճանաչել և տառապեալ ազգակիցներուն, որք իրենց պէտպաւով և հանգիստ վիճակ չունէին, որով զանազան պարագայներու մէջ և ամեն պէտք եղած ժամանակ օգնեցին նոցա նիւթապէս և բարդապէս նպաստաւորութիւն անելով:

Եւ թողնելով բազմազան օգնութիւններն, օրինակ, 3000 հայ գաղթականաց հաց և հաւաքած մատակարարեցին, ինչպաւոյ Վանայ հրկիւղեց թուրքաւորութիւններն անելն, և այն և այլն բաւական կը համարիմ այստեղ յիշել միայն այն օժանդակութիւնն, զոր կանեն մեր ուսումնական եղբարցներն Վանայ բարդական լուսաւորութեան համար, օգնելով և Պոլսոյ Արարատեան ընկերութեան, որ առաջնորդ հանդիսացած է այդ վրէժ գործին: Զմայլած եմ հոգով տեսնելով մեր եղբարց այս աստիճան ազնիւ և համակրական ձգտումներն, զորս ունին զէպ իրենց թիւրքահայատակ ազգակիցներ: Իրենց ազգային սրբազան զգացումն այնչափ շատ էր որ երբ «Արարատեան ընկերութեան» կովկասեան ներկայացուցիչ պ. Մկրտիչ փորձագետաց

«Մշակի» ներկայ տարուոյ 63 համարով Վանայ մէջ գիւղերովի վարժարան բանալու համար «Արարատեան ընկերութեան» օգնել յորդորեց, նոքա Հայաստանի վրա իրենց ունեցած սիրովն անմիջապէս փութացին նպաստներ տեղալ յիշեալ ընկերութեան, մասնաւոր նկատելէ ետք թէ «Մշակ» իւր 64 համարին մէջ առաջնորդող յօդուածով մը կարեւորութիւն տուաւ նոյն յորդորին և առաջնորդ հանդիսացաւ նուիրատուութիւններն հաւաքելու: Ռուսաբանակ եղբարց այս տեսակ եռանդն կարծէ օրինակ լինել ամեն տեղ բնակեալ հայոց, և ուսուցանել ամենուն թէ Հայաստան փրկել ամեն հայոց պարտքն է թէն Հայաստանի մէջ բնակած չը լինեն:

Մեր ուսումնական եղբարց ազգային զգացմամբ այս աստիճան ձգտուելն զէպ իրենց տաճկահայատակ եղբարց յառաջագիտութիւնն նշան է թէ նոքա շատ լաւ գիտեն և կը ծանօտանա ազգակիրութեան առաքնութիւնն և թէ նոքա ողորդ շատ կը սիրեն իրենց ազգակիցներ: Նրբ կը նկատենք այս գովելի և օրինակելի ձգտումն մեր քաջած և քաջելու վրա եղած թշուառութեան մէջ բաւական միջոցաւորութիւն կը զգամք, վասն զի կը տեսնենք որ մոռացուած չենք մեր երջանիկ ապրող և հարստահարութիւններէ զերծ եղող այն եղբարցներէն, որք Ռուսաստանի հզօր կառավարութեան ներքն հանգիստ օրեր անցունելու բաղձ ունեն:

Վանայ ժողովուրդը՝ որ թիւրքիոյ հայոց ամենէն շատ չարչարուածն է, «Մշակ» միջոցով իմանալով այն նուիրատուութիւններ, զորս կանէ ուսումնական Արարատեան ընկերութեան» Վանայ մէջ գիւղերովի վարժարան բանալու համար, իսրին զգացմամբ շնորհակալ և ուրախ կը լինի: Զի այդ նուիրատուութեան շնորհիւ երջանիկ ապագայ մը կը յուսայ տեսնել, մասնաւոր երբ կը մտածէ թէ զործին առաջնորդ «Արարատեան ընկերութիւնն» է, որոյ վրա մեծ համարում ունի, Զի փորձով տեսած է այդ ընկերութեան Ալիւրի մէջ ունեցած դպրոցն և ուրիշ դպրոցներ բանալու վրա լինելն:

Հայաստան ամեն հայու հայրենիք լինելով զայն փրկել ամեն հայու պարտքն է: Հայաստան փրկելու զայն շնորհիւ ծաղկեցունելու ասէ: Էն: Հայաստան փրկելու համար պէտք է ուսուցանել հայոց որ նորա տէր լինել իրենց իրաւունքն է և թէ այդ բանի համար աշխատել անհրաժեշտ հարկ է: Այդ գաղափարն դպրոցներու մէջով միայն կարելի է ընդհանրացունել: Ուրեմն եթէ կողքէք Հայաստանի փրկութիւն, նորա մէջ դպրոցներ բանալ ձեռնարկեցէք: Հայաստանի, մասնաւորապէս Վասպուրականի ներկայ դպրոցներն անբաւական են պահանջուած արդիւնքն արտաբերելու, զի կանոնաւոր դրութիւնէ, օրինաւոր մեթոդէ և այն ամեն հանգամանքներէ, որք դպրոցաց անհրաժեշտ են, զուրկ են նոքա: Նոցա մէջ ազգային ոգի և զգացում արձարծիւ չը կայ: Նոցա մէջ մի հիմնաւոր ուսում կամ մի յեղափոխիչ լեզու: Ուսանել անկարելի է: Վասպուրականի կամ Վան քաղաքի մէջ իբր 10 դպրոց և իբր 1600 ուսանող կայ, սակայն դոցա հող մին բաւականացուցիչ չէ: Դաստիարակութեան անկանոն մեթոդի պատճառաւ առաջադրուած ուսմունքներն և ոչ մէկ աշակերտ չը կարենար ուսանել գէթ մասամբ իւրեք: Ահաւասիկ երեսուն տարի է որ Վանայ մէջ դպրոցներ կան, բայց այսօր ոչ մէկ հայ չը կայ Վանայ մէջ ֆրանսերէն կամ մի այլ եւրոպական լեզու գիտցող, բացի այն մէկ քանի անձերէն, որք Կ. Պոլսի կամ Ներսիս ուսած են և որք թուով 3—4 են: Արդող Վասպուրականի մէջ չէք կրնար գտնիլ մի անձ, որ Վանայ դպրոցներէն դաստառն լինելու չափ ուսեալ դուրս եկած լինի: Ներկայ դաստառը, որք երբեք պահանջուած յատկութիւններն չունեն, օտար քաղաքներ ուսած են ինչ որ գիտեն: Այնպէս որ դաստառներն 20—30 տարիէ հետէ պաշտօն կը վարեն այստեղ, վասն զի նոցա յաջողութեւ համար արժանաւորներ չը կան, Այս բանէն ստիպեալ «Արարատեան ընկերութիւն» իւր զըւրոցին համար, որ է Ալիւրի մէջ Կ. Պոլսէն ծանր ծախքով դաստառն խրկեց:

Արդ սոքա ամեն կապացուցանել թէ Հայաստանի ներկայ դպրոցներն անբաւական են սպասուած փրկութիւն իրազօրող մարդեր յարուանելու: Ուրեմն «Արարատեան ընկերութեան» խորհածն, մի գիրքովի վարժարան բանալ Վանայ մէջ, Վան լուսաւորելու առաջին և անհրաժեշտ միջոցն է: Վասն զի այդ գիւղերովի վարժարան կրնայ հիմնաւորապէս գիտութիւններ, լեզուներ ուսուցանել և ազգային ոգով վառուած մարդեր յարուցանել, որք զանազան

դպրոցներու և դիւղերու մէջ դաստառութիւն անելով արմատովին կը յեղափոխեն զՎան բարոյապէս:

Ահա այստեղ կը յանգի Վանայ գիւղերովի վարժարանին համար «Արարատեան ընկերութեան» նպատակը: Զայս ծանցաւ ուսումնական հայ հասարակութիւն և կատարեց իւր պարտքը: Ուրեմն գովելի են նաև օրինակելի են իւր գործերն: Եւ շնորհակալութիւն կը մատուցանեմ այս առթիւ մեր արեւակից եղբարց և կապաւորուեմ գիրենք որ Վանայ ժողովուրդը կը ծանօտայ իրենց երախտիք: Նոցա նուիրած մէկ փոքրիկ լուսնայն անգամ ի կորուստ չերթար, այլ պիտի ծառայէ ապագային մէջ ազգային—զործող մարդեր յարուցանելու:

Մարկոս Նաթանեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Times» լրագիրը հաղորդում է, որ սուրբ-թանը վերջին տեսակցութեան ժամանակ յայտնեց չօրարտ-փաշային իր գիտաւորութիւնները վերանորոգութիւններ մտցնել թիւրքիայի մէջ և հաւանութիւն տուեց այժմեան զինուորական նաւատորմի փոքրացնելուն:

«Daily News» լրագիրն հաղորդում են, որ Կերվիշ-փաշա հոկտեմբերի 6-ին ուղևորվեցաւ Երզնկայ: Ուր գտնվում են թիւրքաց զորքերի գլխաւոր ոյժերը: Հայաստանի մէջ, Նոյն երկրոյ ուղևորվեցին Կ. Պոլսի զորքերով և թիւրքաօթիկներով բեռնաւորված հինգ մեծ նաւեր: Այժմ Տրապիզոնի մէջ միայն չորս բաւաւոր զօրք է մնացել:

«Բէյտերի ընկերութեան» Հոմից հաղորդում են, որ պապի գրած վերջին նամակը կարդինալ Նիւային պատճառ դարձաւ, որ շատ կուռավարութիւններ բացատրութիւն պահանջեցին: Պապի քարտուղարը նուիրակներ բացատրող գրութիւն ուղարկեց: Գրութեան մէջ ասված է, որ պապը, հրատարակելով իր նամակը գիտաւորութիւն ունէր ցոյց տալ, որ նա պատրաստ է օգնել կառավարութիւններին յաղթել ժամանակակից ոգին, որ ձգտում է քանդել եկեղեցիներ և զաներ: Խառնակայ վերաբերութեամբ գրութեան մէջ ասված է, որ պապը Վատիկանի համար կատարեալ ազատութիւն է պահանջում:

Կ. Պոլսից «Polit. Corresp.» լրագիրն հաղորդում են, որ հոկտեմբերի 14-ին Կարաթէօ-զօրի—փաշայ տեսակցութիւն ունեցաւ սուլթանի հետ: Նոյն օրը Հայաստանի մէջ լուսնաց և թիւրքաց սահմանները ողջունու համար նշանակված մասնաժողով Կ. Պոլսից ուղևորվեցաւ զէպի Բաթում:

ՄՇԱԿԻ ՀՈՒՄՈՐԻՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՆԻՑ

10-րդ, 19/31 հոկտեմբերի: Մինիստրների խորհուրդի նիստը շարունակվում էր 2 1/2 ժամ: Կառավարութիւնը վճռեց ուղարկել Էմիրին մի պաշտօնագիր: «Daily News» լրագիրն Սիւնիոյց հաղորդում են, որ պաշտօնագիրը Էմիրից ապահովութիւն է պահանջում Անգլիայի հետ ապագայում համաձայնութիւն պահանջելու համար: Էմիրը պէտք է պատասխանէ երեք շարժվալ ընթացքում:

ՓԱՐԻՉ, 19/31 հոկտեմբերի: Նայելով պատգամաւորների ընտրութիւններին սենատորներն նշանակելու համար, սենատի ապագայ հանրապետական մեծամասնութիւնը կարելի է թվում:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԻ, 20 հոկտեմբերի: Պետական բանկի 50/0 տոմսակը առաջին շրջանի արժէ 97 ռ., երկրորդ 95 1/8 ռ., երրորդ 95 1/2 ռ., չորրորդ 95 1/4 ռ., ներքին 50/0 տոմսին փոխառութեան տոմսակը արժէ 234 ռ. 25 1/2, երկրորդ 229 ռ. արևելեան 92 3/8 ռ., ոսկի 8 ռ. 30 1/2: Տրամադրութիւնը ամուր է: Մտնաւոր գիսկոստ 3/5:

